Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշմամբ հաստատվել է «Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը՝ առանց նշված ընկերության ստեղծման վերաբերյալ համայնքի ավագանու համապատասխան որոշման ընդունման: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ անհրաժեշտ է որոշումն ուժը կորցրած ճանաչել:

Բացի այդ, որոշման 1-ին կետը հղում է պարունակում հավելվածին, սակայն անբաժանելի մաս համարվող հավելվածը կից ներկայացված չէ: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
*Հեռ. /0312/ 4-90-00*148*
21.07.2020թ.